ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4322-Ա « 03 » սեպտեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ, ՀԱՂԹԱՆԱԿ 1-ԻՆ ՓՈՂՈՑ Հ.7 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՈՒՇԵՂ ԿԱՐԵՆԻ ԴԵՂՈՅԱՆԻ, ՎԱՉԱԳԱՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԴԵՂՈՅԱՆԻ, ՌՈԶԵՏԱ ՍՈՒՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մուշեղ Կարենի Դեղոյանի (ծնված 29.03.1993թ.), Վաչագան Արտավազդի Դեղոյանի (ծնված 12.11.1957թ.), Ռոզետա Սուրենի Հարությունյանի (ծնված 08.12.1949թ.) դիմումները: Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 1-ին փողոց հ.7 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1767.5քմ, որից 1470.0քմ մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (ըստ օրենքի ժառանգության իրավունքի 12.07.2007թ. հ.7572, 12.07.2021թ. հ.2774 21.07.2023թ. հ.6886 վկայագրերը):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 28.11.2024թ. հ.ԱՏ-28112024-01-1246, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 29.06.2026թ. հ.5928 գրությունները, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 12.07.2007թ. հ.7572, 12.07.2021թ. հ.2774 21.07.2023թ. հ.6886 վկայագրերը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 26.07.2026թ. հ.20-Ել-24529 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 1-ին փողոց հ.7 տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1.Վերականգնել Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 1-ին փողոց հ.7 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Մուշեղ Կարենի Դեղոյանի, Վաչագան Արտավազդի Դեղոյանի, Ռոզետա Սուրենի Հարությունյանի սեփականության

իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1470.0քմ մակերեսով հողամասին կից 297.5քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 297.5քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N 204-Ն որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 1-ին փողոց հ.7 հասցեում գտնվող 1767.5քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ